# Ծաղիկներ ընկերոջ շիրիմին

Ապրիլի 14-ին լրացավ ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի նահատակության 8-րդ տարին: Ստեփանակերտի հուշահամալիրում գտնվող նրա գերեզմանին այցելեցին եւ ծաղիկներ դրեցին ՀՅԴ Բյուրոյի անդամները՝ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի գլխավորությամբ: Ծաղիկներ դրվեցին նաեւ ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ղեկավարության եւ շրջաններից ժամանած կուսակցական ընկերների կողմից: Հարազատների հետ խնկարկելով Արթուր Մկրտչյան հայի հիշատակը՝ հավաքվածները, որպես սփոփանք, մտովի անցան ազատագրված տարածքներով: Այդ օրը Արթուր Մկրտչյանին հիշեցին ու տապանաքարին ծաղիկներ դրեցին շա.տ ու շա.տ արցախցիներ: